ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2012 թվականի N 449-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՈՌՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության 2012 թվականի օգոստոսի 2-ի թիվ 23 ակտը՝ **որոշում եմ.**

1. Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պոռշյանի գյուղական համայնքի ղեկավար ***Հրաչ Մուրադյանին*** նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ պետ Լևոն Պետրոսյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ